ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մայիսի 15-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «ՀՀՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/19»

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 13.05.2026թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 15.05.2026թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

Տես կից մասնակցի հարցումը:

Պարզաբանում

Հարցմանն ի պատասխան հայտնում ենք, որ.

Պատասխան 1: Հիմնական ներդիրի 2.4-2.6 մմ հաստության բնական հումքի պադոշի հաստության վերաբերյալ հայտնում եմ, որ 2.4-2.6 մմ հաստությունը ճտքավոր կոշիկների արտադրության մեջ ընդունված է, մասնավորապես ՀՀ ԶՈՒ կարիքների համար նախորդ տարիներին նույնպես մատակարարվել է նույն հաստության բնական հումքի պադոշից հիմնական ներդիրով ճտքավոր կոշիկներ, որոնք իրենց կիրառելությամբ ոչ մի խոչընդոտ չեն ստեղծել հարմարավետության տեսանկյունից:

Հիմնական ներդիրի ֆունկցիոնալ նշանակությունը բնավ կախված չէ, թե ներբանի միացումը վերնամասին կլինի ձուլման, սոսնձման, թե մեխով ամրացման եղանակներին:

Պատասխան 2. Արտաքին ներբանի վերաբերյալ հավելված 3-ում նշված էսկիզի տվյալները վերցված են փորձարկում անցած ճտքավոր կոշիկների կիրառելությունից: Այն շատ հարմարավետ է, իսկ ինչ վերաբերում է ամրությանը, ապա տվյալ չափսերի ներգրավումը տեխնիկական բնութագրում ընհանրապես կապ չունի, իսկ հարմարավետության վերաբերյալ վերևում արդեն իսկ նշված է:

Միաժամանակ նշեմ, որ մարտավարական կիրառելության վերաբերյալ պարտավոր չենք պարզաբանումներ տալ:

Իսկ ինչ վերաբերում է հավասար մրցակցության պայմաններ ստեղծելուն, ապա նշեմ, որ այսօր արդի աշխարհում տվյալ ներբանի ստացումը շատ պարզ տեխնոլոգիական պրոցես է, և յուրաքանչյուր մասնակից վերոնշյալ չափսերով արտաքին ներբան կարող է պատվիրել կամ հնարավորության պարագայում նաև արտադրել:

Միաժամանակ նշեմ, որ արտաքին ներբանի չափումները ֆունկցիոնալ օգտագործման ժամանակ ունեն հստակ նշանակություն:

Պատասխան 3: Գնման ժամանակցույցով նախատեսված ժամկետները չեն հակասում գնումների մասին օրենքին:

Պատասխան 4: Ապրանքատեսակի նախահաշվային արժեքի վերաբերյալ հիմք է հանդիսանում նախորդ տարվա պայմանագրային գինը, որը չի հակասում գնումների մասին օրենքի պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ. Տերյանին:

Հեռախոս՝ **010-29-44-18*:***
Էլեկտրանային փոստ՝ g.teryan@mil.am:

«ՀՀ ՊՆ- ԲՄԱՊՁԲ-26-7/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

15.05.2026թ.

N Ե-01/05
13 մայիս 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ
ԹԻՎ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/19 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ,
ԳՆԱՀԱՏՈՂ ՀՆԱՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃՏՔԱՎՈՐ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԹԻՎ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/19 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱ

Գնահատող հանձնաժողովի հարգելի՝ անդամներ, քարտուղար,

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ճտքավոր կոշիկների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/19 ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ՝ հրավեր) 1-ին մասի 3-րդ կետը՝ խնդրում եմ պարզաբանումներ ներկայացնել հրավերի որոշ դրույթների վերաբերյալ: Մասնավորապես.

1. Հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված՝ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» N ԲՄԱՊՁԲ-26-7/19- պայմանագրի նախագծի (այսուհետ՝ պայմանագրի նախագիծ) մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի (այսուհետ՝ տեխնիկական բնութագիր) 8-րդ պարբերությամբ պահանջվում է, որ «...: *Հիմնական ներդիրը բաղկացած է 2,4-2,6 մմ հաստության բնական հումքից՝ պադոշից, ...*»:

է, որ «...: *Հիմնական ներդիրը բաղկացած է 2,4-2,6 մմ հաստության բնական հումքից՝ պադոշից, ...*»:

Խնդրում եմ պարզաբանել հիմնական ներդիրի 2,4-2,6 մմ հաստությամբ պահանջի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Կոշկեղենի արտադրության ոլորտում (այդ թվում ռազմական նշանակության կոշկեղենի) մասնագիտացված կազմակերպության ղեկավար լինելու հանգամանքով պայմանավորված կարող եմ փաստել, որ ճտքավոր կոշիկի ներբանի միացումը վերնամասին ձուլման եղանակով արտադրելու պարագայում հիմնական ներդիրի հաստ լինելը չի ապահովում լրացուցիչ ամրություն կամ որևէ այլ առավելություն (նման չափորոշիչներով պահանջ միջազգային պրակտիկայում նույնպես կիրառելի չէ): Ավելին, այն ավելացնում է կոշիկի քաշը, կոշտացնում է կոշիկի ոտնաթաթի հատվածի ճկունությունը՝ բացասական ազդեցություն թողնելով այն կրելու հարմարավետության վրա:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հիմնական ներդիրի 2,4-2,6 մմ հաստությամբ պահանջը հիմնականում կիրառվել է այն դեպքում, երբ կոշիկի ներբանը վերնամասին ամրացվել է մեխման եղանակով (ըստ էության այն վերաբերում է հին տեխնոլոգիական մոտեցմանը):

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում եմ տեխնիկական բնութագրում հիմնական ներդիրի «2,4-2,6 մմ հաստության» պահանջը փոխարինել «1,8-2,0 մմ հաստության» չափորոշիչով, ինչը կնպաստի ճտքավոր կոշիկի քաշի նվազեցմանը, ճկունության բարձրացմանը և այն կրելու ընդհանուր հարմարավետության բարելավմանը:

2. Տեխնիկական բնութագրում ներկայացվել է արտաքին ներբանի տեսքի որոշ չափորոշիչների վերաբերյալ պահանջ: Այն է՝ «*Արտաքին ներբանի չափումներն ու արտաքին տեսքը միջին (42) չափսի համար պետք է համապատասխանի հավելված 3-ում պատկերված էսքիզի առկա տվյալներին (թույլատրելի շեղումը՝± 0,7 մմ): Բոլոր մնացած չափսերի համար արտաքին ներբանի չափային գրադացիան պետք է իրականացվի ճիշտ և համաչափ կերպով՝ ապահովելով չափսերի միջև համամասնությունների պահպանումը և ֆունկցիոնալ համապատասխանությունը:*»:

Խնդրում եմ պարզաբանել նման պահանջը կոշիկի կրման ընթացքում ինչպիսի ֆունկցիոնալ կամ որևէ այլ անհրաժեշտ նշանակություն ունի, այդ թվում՝ ամրության, հարմարավետության, մարտավարական կիրառելիության կամ այլ գործառնական հատկանիշների տեսանկյունից:

Կածում եմ, որ նման ձևակերպմամբ պահանջը հակասում է «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին՝ սահմանափակելով մրցույթին հնարավոր մասնակիցների շրջանակն, ինչպես նաև խոչընդոտելով նրանց միջև իրական՝ հավասար մրցակցային պայմանների ապահովմանը: Բացի այդ, նման դիզայնային պահանջների առկայությունը ստեղծում է

գնման գործընթացի խտրական և ուղղորդված հիմունքներով կազմակերպելու ռիսկեր: Մասնավորապես.

Կոշկեղենի արտադրության ընդունված պրակտիկայում, արտաքին ներբանի դիզայնը, որպես կանոն, որոշվում է արտադրող կազմակերպության կողմից՝ հաշվի առնելով իր ապրանքային նշանը, տեխնոլոգիական հնարավորություններն և տվյալ կոշիկի ընդհանուր կառուցվածքը՝ հիմքում դնելով որակական և գործառնական չափորոշիչներ (այդ թվում նաև ռետինե շերտի երկայնական կտրվածքի նվազագույն հաստության և պրոտեկտորների նվազագույն խորության չափային լուծումներ): Տարբեր արտադրողների ներբանները կարող են ունենալ նմանատիպ որակական և գործառնական հատկանիշներ, սակայն արտաքին տեսքով, առանձին դիզայնային տարրերով, դրանց հերթականությամբ և չափային լուծումներով լինեն տարբեր՝ ըստ էության չկրկնվող: Այդպիսի տարբերությունները չեն ազդում կոշիկի գործառնական որակների՝ ամրության, հարմարավետության, սայթակաքակայնության կամ օգտագործման պիտանիության վրա: Հետևաբար, տեխնիկական բնութագրով ներկայացված էսքիզի պահանջները (ներբանի առանձին մասնիկների, դրանց հերթականության, հեռավորության, չափսերի և արտաքին տեսքի այլ բաղադրիչների վերաբերյալ) կարող է բավարարել միայն մեկ արտադրողի հնարավորություններին՝ ըստ էության սահմանափակելով այն մասնակիցների շրջանակը, որոնք ունակ են մատակարարել համարժեք որակի կոշիկներ:

Այս համատեքստում, որպես օրենսդրական պահանջ, էական է հիշատակել նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» **թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ» կարգի (այսուհետ՝ Որոշում) 22-րդ կետի պահանջներով, համաձայն որի՝** *«Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝...»*:

Բացի այդ, ներբանի արտադրության նպատակով նոր կաղապարների (հրավերով ներկայացված էսքիզին համապատասխան) պատվիրումը և պատրաստումը մասնակիցների համար կառաջացնի լրացուցիչ ժամանակային և ֆինանսական բեռ: Նոր կաղապարների պատրաստումը (ձուլման եղանակով արտադրելու դեպքում) սովորաբար տևում է 5-ից մինչև 8 ամիս:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ վերանայել և տեխնիկական բնութագրից հանել էսքիզով ներկայացված արտաքին ներբանի առանձին դիզայնային մասնիկների, դրանց հերթականության, չափսերի (ֆունկցիոնալ և գործառնական

հատկանիշների տեսանկյունից նշանակություն չունեցող) և ոչ էական նշանակություն ունեցող այլ չափորոշիչների վերբերյալ պարտադիր պահանջները:

Նման պահանջների անհրաժեշտության վերաբերյալ բավարար և մասնագիտական պարզաբանում չներկայացնելու, ինչպես նաև դրանք չվերանայելու դեպքում կստեղծվի կարծիք, որ գնման գործընթացը կազմակերպվում է խտրական և ուղղորդված հիմունքներով, որի արդյունքում չի ապահովվի մրցակցային իրական հավասար պայմաններ:

3. Պայմանագրի նախագծով (պայմանագրի նախագծի մաս կազմող «Գնման ժամանակացույց» հավելված 3-ով) ապրանքների առաջին խմբաքանակի՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար ընդհանուր քանակի 50 տոկոսի մատակարարման ժամկետ է սահմանվել «*Համաձայնագրի կնքումից հետո 60 օրացույցային օրվա ընթացքում*»:

Խնդրում եմ պարզաբանել, թե նման ժամկետներ սահմանելիս արդյոք հաշվի են առնվել հումքի ձեռքբերման, ներմուծման, լոգիստիկ հնարավոր ուշացումների և նման մեծ խմբաքանակի արտարության համար անհրաժեշտ իրական ժամանակահատվածները:

Հարկ է նշել, որ նման մեծ խմբաքանակի արտադրության համար նախատեսվող սեղմ ժամկետը ռիսկային է, որոնց համար առկա են մի շարք հիմնավոր պատճառներ: Մասնավորապես.

Մրցույթի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված կազմակերպությունները հումք և նյութերի պատվերները կարող են իրականացնել միայն պայմանագրերի (և կամ համաձայնագրերի) կնքումից հետո: Մինչ պայմանագրի կնքումը հումք և նյութերի պատվիրումն ու ձեռքբերումը տնտեսապես ռիսկային է, քանի որ տարբեր պատճառներով պայմանագիր կարող է չկնքվել (օրինակ՝ գնման գործընթացի բողոքարկում և այդ հիմքով ընթացակարգի չեղարկում և այլն: Նման դեպքերը բազմազան են, ինչն առկա է նաև ՀՀ ՊՆ-ում), ինչի հետևանքով կազմակերպությունները կկրեն էական ֆինանսական վնասներ: Միայն հումք նյութերի ձեռքբերման պայմանագրերի կնքման, դրանց առաջին խմբաքանակների ստացման և արտադրական գործընթացի մեկնարկի համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված:

Արտադրությունը կազմակերպելու նպատակով հումք նյութերի որոշ մասը (պոլուրեթան, սոսինձ, իզոցիոնատ, ռետին և այլ բաղադրիչներ) ներկրվում են արտերկրից: Ներկայիս տարածաշրջանային և աշխարհաքաղաքական պայմաններում հաճախ առաջանում են նաև լոգիստիկ դժվարություններ, որոնց արդյունքում մատակարարման լոգիստիկ ժամկետները կարող են երկարաձգվել 30-ից 50 լրացուցիչ օրով:

Նման իրավիճակում պայմանագրի կնքումից հետո 60 օրացույցային օրվա ընթացքում նման մեծ ծավալների՝ ընդհանուր քանակի 50 տոկոսի արտադրությունն ու մատակարարումը կարող է առաջացնել արտադրական և կազմակերպչական էական

ռիսկեր (այդ թվում նաև արտադրանքի որակի տեսանկյունից): Հետևաբար, նման սեղմ ժամկետները սահմանափակում են տեղական արտադրողների մասնակցության հնարավորությունները և ուղղակի առավելություն են ընձեռնում այն տնտեսվարողներին, որոնք հանդիսանում են ներկրողներ կամ ունեն համարժեք պատրաստի արտադրանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության իրական պահանջարկի վերանայել մատակարարման ենթակա խմբաքանակների ժանկետները՝ սահմանելով մատակարաման ավելի երկարատև և իրատեսական ժամկետներ:

Նման մոտեցումը կնպաստի պատրաստի արտադրանք ներկրողների և տեղական արտադրողների միջև համաչափության, ինչպես նաև առավել հավասար և թափանցիկ մրցակցային պայմանների ապահովմանը, ինչը որպես սկզբունք և պայման ամրագրված է ՀՀ-ում գնումները կարգավորող օրենսդրությամբ:

4. Հրավերով և Պայմանագրի նախագծով ճտքավոր կոշիկի նախահաշվային արժեք է (առավելագույն գին) սահմանվել՝ մեկ զույգի հաշվարկով 10 300 ՀՀ դրամ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ *«... առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:...»*՝ ինչը ամրագրված է նաև հրարվերով: Որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետով համաձայն՝ *«մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) ...»*:

Խնդրում եմ պարզաբանել, տվյալ գինը սահմանելիս արդյոք ուսումնասիրվել, վերլուծվել և հաշվի են առնվել նախատեսվող տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներով ապրանքատեսակի շուկայական իրական գները (այդ թվում ՀՀ-ում և արտերկրում գործող մեծածախ գները), կամ դրանց ինքնարժեքը: Եթե առկա են նման ուսումնասիրություններ և վերլուծություններ, ապա խնդրում եմ տրամադրել թե ինչ աղբյուրների հիման վրա և ինչ մեթոդով է գնագոյացման հաշվարկը իրականացվել (շուկայի, համացանցից վերհանված տեղեկատվության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություններ, վերլուծություններ, համադրումներ և այլն՝ նշելով նաև տեղեկատվության ստացման աղբյուրը, կայքի հասցեն):

Կարծում եմ, որ տվյալ դեպքում ապրանքատեսակի իրական գնի գնահատում տեղի չի ունեցել և հրավերով նախատեսվող գինը (նախահաշվային արժեքը) սահմանվել է նախորդ՝ 2025 թվականին ՀՀ ՊՆ կողմից կնքված պայմանագրով ամրագրված մեկ զույգ ճտքավոր կոշիկի գնման գնին համարժեք: Հարկ է նշել, որ նշված գինը (նախահաշվային արժեքը) զգալի ցածր է տվյալ արտադրատեսակի ինքնարժեքից և չի կարող պարունակել ակնկալվող շահույթ: Մասնավորապես.

Ճտքավոր կոշիկի ձեռքբերման գինը 2025 թվականի համար (ընտրված մասնակից հանդիսացող մատակարար կազմակերպության կողմից գնառաջարկը) կազմել է 10 300

դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), ինչի վերաբերյալ մեր կողմից համապատասխան հայց է ներկայացվել դատարան՝ առաջարկվող գինը ինքնարժեքից ցածր լինելու հիմնավոր պատճառաբանությամբ: Դատարանի կողմից հայցը ընդունվել է վարույթ և դատաքննության արդյունքում կայացվել է համապատասխան վճիռ (ըստ էության լիցենզավորված կազմակերպության կողմից համապատասխան փորձագիտական եզրակացության, ինչպես նաև տվյալ գնային առաջարկը ներկայացրած կազմակերպության կողմից տրամադրված տվյալների հիման վրա), որով հիմնավորվել է, որ ներկայացված գնային առաջարկը ցածր է տվյալ ապրանքատեսակի ինքնարժեքից: Հարկ է նշել, որ տվյալ դատական ակտը մասնակիցներից որևէ մեկի կողմից չի բողոքարկվել (ՀՀ ՊՆ-ն ևս հանդիսացել է դատական գործընթացի մասնակից կողմ):

Բացի այդ, նոր տեխնիկական բնութագրով նախատեսվող ճտքավեր կոշիկի համար որոշ բաղադրիչների մասով սահմանվել են առավել բարելավված պահանջներ, քան սահմանված են եղել 2025 թվականի համար, ինչը ենթադրում է առավել որակյալ՝ հետևապես բարձրարժեք հումք նյութերով արտադրված ճտքավոր կոշիկների մատակարարում: Բացի այդ, ներկայիս տարածաշրջանային և աշխարհաքաղաքական պայմաններում (ըստ էության Իրան-ԱՄՆ պատերազմով պայմանավորված) լոգիստիկ ծառայությունների և հումք-նյութերի արժեքները զգալի թանկացել են, իսկ նավթային հիմքով հումք-նյութերի (պոլուրեթան, ռեզին և այլն) գները թանկացել են ավելի քան 40 տոկոսով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ վերանայել հրավերով նախատեսված ճտքավոր կոշիկի նախահաշվային արժեքը և հիմնավոր վերլուծությունների ու փաստական տվյալների հիման վրա սահմանել իրատեսական գին՝ համապատասխանեցնելով ՀՀ-ում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին: Նման մոտեցումը կնդլայնի մրցույթին հնարավոր մասնակիցների շրջանակը՝ ստեղծելով նաև իրական մրցակցության պայմաններ: Բացի այդ, կարծում եմ, որ վերջնարդյունքում ինքնարժեքից բարձր գնառաջարկի և պայմանագրի կնքման դեպքում կմատակարարվի տեխնիկականն բնութագրին համարժեք և որակական բարձր հատկանիշներով ճտքավոր կոշիկներ և այդ մասով ՀՀ ՊՆ-ում խնդիրները կհավասարեցվի նվազագույնի: